Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Քասախի Ա.Հովհաննիսյանի անվան №2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի 2 տեղ (16 և 15 դասաժամ), հայոց լեզվի և գրականության (19 դասաժամ), քիմիայի (12 դասաժամ), պատմության (18 դասաժամ), աշխարհագրության (15 դասաժամ), ֆիզիկայի (14 դասաժամ), կենսաբանության (13 դասաժամ), ռուսաց լեզվի 2 տեղ (22 և 9 դասաժամ), երաժշտության (6 դասաժամ), կերպարվեստի (6 դասաժամ), մաթեմատիկայի (25 դասաժամ), ինֆորմատիկայի (4 դասաժամ), տեխնոլոգիայի (տղաների խումբ, 5 դասաժամ),բնագիտության (4 դասաժամ), ֆիզկուլտուրայի (11 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրուցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3×4 չափի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,
-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն (Ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները հահամեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում : Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 22-ից մինչև հոկտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 7 -ին՝ ժամը՝ 14:00-ին Քասախի Ա. Հովհաննիսյանի անվան №2 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ գ. Քասախ, Տերյան փողոց շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 19 60 13 հեռախոսահամարին: